



242. ԼԵՐԲԻՆ՝ ՈՉ ԱՍՏՈՒ

Մի հաստ մարդ վար անելու ա լինել, լավ կնիգն ունի։ Որ կնքմ ա կյուղ, էս կնեզը սրա եղներին լավ կերակրեմ, լավ պահեմ։ Իրա մարդուն ել լավ հարգես ա, կշերը քնցնում, առավոտն էլ կերակուրը պատրաստին, ասըմ ա.—Ա՛յ մարդ, վեր կաց, եղանքդ պատրաստ, սելմդ՝ պատրաստ, արի տար, արող վարի։

էս մարդդ ուրախությունից, որ կնքմ ա առավոտը եղանքը լծում վար անելու, մէ հաստ էս կլխին ա պար կյալիս, մէ էն կլխին։

էս կողմից էդերկրի իշխան մարդը ման կյալով տըսնըմ ա՝ էդ հըռընչպարը եղները կաղնացընըմ կյութանի մոտ, մին պար է կյալի, նոր էլի քշըմ։ Ասըմ ա. «Մի կնքմ, տըսնեմ՝ էդ ընչի ա էդ մարդը պար կյալիս։ Կյալիս ա, պարե ա տալիս, ասըմ ա.—Ա՛յ մարդ, էս ընչի՞ հս դու էսենց ուրախություն անըմ։

Ասըմ ա.—Ծամպորդ ախպեր, գիտե՞ս ինչ կա։ Ընծի մէ լավ կնիգ ունեմ։ Կնիգս ընծի լավ ա հարգել։ Իմ կնգա կոչաղությունը, արարունքը տուրըս կյալիս ա, դրա համար էլ համ ճահելանտոմ հմ, համ էլ եռանդի հմ կյալիս։

Ասըմ ա.—Հա՛, շատ լավ կնիգ է։

Կյալիս ա տունը, առավոտը հրաման է տալիս, ասըմ ա.—Ա՛յ տղա, կնացեք, էն մարդուն կանչեք, պերեք։

Պերում են։ Ասըմ ա.—Գիտե՞ս ինչ կա։ էդ երկրի տերը, տիրականը հս հմ։ Ընծի իրեք կնիգ ունեմ, էդ իրեք կնիգը տալիս հմ քեզ, քո կնիգդ պիտի տաս ընծի։

—Ա՛յ մարդ, էդենց պան կըլնի՞։

Ասում ա.—Հրաման ի, ես մեծ եմ, դեկավար եմ, ասում եմ՝
պետք ենթարկվես:

—Դե լավ: Ի՞նչ պի աճի:

Էն մարդը կնւմ ա, իրա կնոջը պերում, տալիս ա էդ իշխա-
նին: Իշխան իրա կնիգնին տալիս ա սրան:

Հիմա, պերել ա, կաղնել ա էս Անգեղակոթի դեմը Որոտան
կետի նման մի կետի մոտ: Մի ձի ա, իրեք կնիգ են՝ ուզում ա
անցկացնի: Ասում ա.—Դե, վերեք, մեկ-մեկ նստեք թարքս,
անցկացնեմ:

Նստել, անցկացնել, պերել, ճրի մեջ կաղնել: Ասում ա.—Ա՛յ
կնիգ, քո խաւաթդ ի՞նչ ար, որ քո մարդդ քեզ շտիրաց:

Ասում ա.—Գիտե՞ս ինչ կա: Իմ մարդս ընձի որ շտիրաց, ես
մը քիչ ծուռ ճանապարհի իմ, շիմ կշտանում իմ մարդից, միշտ
աշքս ուրիշի վրա է:

—Պա՛, —ասում ա, —վնաս չունի, ես քեզ կպահեմ:

Անցնել էն կողմը:

Երկրորդ կնգանը պերել, ճրի մեջտեղը կաղնցնել, ասել.—
ձիշտ պիտի ասել քո պատճառն ի՞նչ էր, որ քո մարդը քեզ տվել,
իմ կնիգն առել:

Ասում ա.—Ես շատ թաւալ եմ, է՛. Մինչև ուրիշ պան շտա,
ես իմ ծեռով պան շեմ վերցնի, ուտեմ:

Ասում ա.—Վնաս չունի, թամբալին էլ տեր եմ:

Տանել:

Երրորդին պերել, կաղնցնել նույն տեղն, ասել.—Բա քու
պատճառն ի՞նչ է:

Ասում ա.—Ես լերբ եմ:

—Վա՛յ, լերբին ոչ աստված: Քո՛ լերբի տեղն ըստեղ ա,—
քցել ճուրն, ասում ա.—գնա՛, խեղդվի:

Պերել երկու կնգան տունը: Մի մեր ունի սրան: Ասում ա.—
Ա՛յ մեր, գիտե՞ս ինչ կա: Էդ կնգնին էդ խաւաթի տերն են: Էդ
մեկը ծուռ ճանապարհի ա, սիրական պիտի պահի, էդ կնիգս էլ
շատ թամբալ ա: Մեր պախը, բալթան պեր ըստեղ:

Պախը, բալթան պերում: Սկսել պատը քանդել: Էն ծուռ ճա-
նապարհի կնիգն ասում ա.—Ա՛յ մարդ, էս ի՞նչ ես անում:

Ասում ա.—Կնի՛գ, դու քո խաւաթն ընձիկ ըսիր, չէ՞ որ դու
պիտի սիրական պահես: Ես էլ իմ խաւաթն եմ ասում: Ես էլ
շեմ սիրում սիրական: Պատի էն կողմից էլ եմ տուռ պացում, էս
կողմից էլ եմ տուռ պացում: Որ կտենաս էն տունից եմ կյալիս,

սիրականիդ էն տունից պաց թող, էնտեղից կգամ, էս տունից պաց թող:

էս կնիգն ասում ա.—Վա՛յ, դալաթ անեմ, ես էլ էդ պանը չեմ անի: Զէ՛, չէ՛, չէ՛, վեր կաց, վե՛ր:

Վեր էկավ, քարեռը շարել: Ասում ա. «Պրծանք»:

Երկրորդ կնգանը պառկեցնել, մորն ասել.—Ա՛յ մեր, դիտե՛ս ինչ կա: Եթե որեւէ մի պան կանի, տրան մի քիչ հաց կտաս, եթե ախշատանք չանի, ոչ մի պան չտաս:

Երկրորդ օրը էդ կնիգը շուղել տեղից վեր կենա, ասել.—Մի կտոր հաց տուր, ուտեմ:

—Ախր, դու ի՞նչ ես արել, որ հաց ուտես: Մեր կարգը, դիտե՛ս ինչ, պտի մի կործ անես, որ հաց ուտես:

էդի հենել մի քիչ ավել անել: Վերցնում ա, սրան մի քիչ հաց է տալ: Մի ուրիշ կործ էլ անել, մի քիչ էլ ավելացնել: Սրանով արդեն տըսնում ա, չէ՛, կիյրաթի եկավ, սկսեց աշխատել:

Հիմա, երկրորդ օրը ազատ օր ա, հռնչապար պիտի հանգըստանա: Էկել ա պառկել ա: Մերը չի ուզում աղային հանել, ասում ա. «Նեղացած ա, թո քնի»:

Թամբալ կնիգն եկել ա, մարդու՞ն ասում ա.—էդ ընչի՞ չես վեր կենալ:

Մի քիչ նեղացել եմ, քնեմ:

—Զէ՛,—ասում ա,—մեր տունը կարդ կա: Էսօր մերդ փլավ ա էփել պըրընձն: Վեր կաց, պրինձն ըստկի, որ քեզ պածին տամ: Որ տու պրինձը շտակես, քեզ հաց չեն տա: Էս տան կարգը կանոն ըդենց ա:

Ասում ա.—Բա՛, տես ինչդար խելոք պան էլավ: Թամբալ կնիգն էկավ, կոշաղացավ:

Վեր ա կենալ առավոտը, կնալ նույն արտը վարելու, մի էրկու-իրեք անգամ ավել պար կյալ: Նույն իշխանը պատահել, ասել. «էդ ի՞նչ պան ա»: Կնալ, կանչել, ասել.—էդ ընչի՞ ես պար կյալի:

—Մեր երկրի իշխանն իմ մի կնիգս առեց, իրեք կնիգ տվեց: Ես էնենց եմ արել, հիմի էդ կնիգներս ընդդանից շատ են ընձի հարգըմ:

Նոր, էդ իշխանը կանչել, ասել.—Որ ըտենց խելոք մարդ հռնչապար ես, արի, քու կնիգդ տար, իմ երկու կնիգը տու:

Աստված հեռու պահի լրբերից: Ըմեն պանին միշտ կա, տեմերն առնել կըլնի, բայց լերբին՝ ոչ աստված: